ԼԱՅԲՆԻՑ

Գերմանացի խոշորագույն մաթեմատիկոս և փիլիսոփա Գոթֆրիդ Լայբնիցը ծնվել է 1646 թվականիին, Լայպցիգի համալսարանի բարոյագիտության պրոֆեսորի ընտանիքում: Երբ նա յոթ տարեկան էր, մահացավ հայրը, և իմաստուն մայրը իր հիմնական գործը դարձրեց տղային հիմնարար կրթություն տալու խնդիրը: Արդեն այդ տարիքում Գոթֆրիդը անասելի հետաքրքրություն էր ցուցաբերում գիտական զանազան հարցերի վերաբերյալ և դուրս չէր գալիս հոր հարուստ գրադարանից: Մայրը անհանգստանում էր և կարծում, որ այդ հասակում որդին կարող է խճճվել գիտական աշխարհի ոլորաններում: Նա արգելեց երեխայի մուտքը գրադարան: Եվ միայն ամուսնու ընկերոջ հետ հանգամանալի զրույցից հետո, նրա խորհրդով հրաշք գրադարանը նորից դարձավ Գոթֆրիդի զբաղմունքի հիմնական վայրը: Եվ արդյունքը անսպասելի եղավ: Մեկ տարի հետո նա արդեն ազատ տիրապետում էր հունարենին և լատիներենին: Մայրը Գոթֆրիդին տվեց Լայպցիգի լավագույն դպրոց, որտեղ նա հրաշալի էր սովորում: 15 տարեկանում ընդունվեց Լայպցիգի համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: Հիմնական գիտելիքները ստանում էր ինքնաուսուցմամբ: Նյուտոնի հետ միասին դարձավ բարձրագույն մաթեմատի-կայի հիմնադիրներից մեկը և ժամանակակից մաթեմատիկայի մի շարք հասկացությունների անվանումները պատկանում են իրեն:

Լայբնիցը աչքի էր ընկնում բորբոքվող բնավորությամբ, բայց քեն չէր պահում: Նա սիրում էր երեխաներին, բայց երբեք չամուսնացավ: Մինչև հիսուն տարեկանը մտածում էր, որ կհասցնի ամուսնանալ, անգամ առաջարկություն արեց իր հավանած աղջկան: Սա մտածելու ժամանակ ուզեց, բայց այդ ընթացքում Լայբնիցը միտքը փոխեց, իսկ հետագայում տեսավ, որ արդեն ուշացել է ամուսնանալու և երեխաներ ունենալու համար: Նա աչքի էր ընկնում համեստությամբ և պարզ արտաքինով: Մի անգամ, երբ Փարիզում նա մտավ ինչ-որ գրախանութ և հարցրեց ֆրանսիական ժամանակակից փիլիսոփաներից մեկի հենց նոր լույս տեսած գիրքը, վաճառողը հարցրեց.

- Ձեր ինչի՞ն են պետք այդ գրքերը, մի՞թե դուք ունակ եք նման գրքեր կարդալու:

Այդ պահին ներս մտավ գրքի հեղինակը և տեսնելով Լայբնիցին, ասաց.

- Մեծ Լայբնիցին իմ ողջույնը և խոնարհումը:

Վաճառողը շփոթվեց. նա չէր պատկերացնում, որ իր առջև կանգնած է ժամանակի խոշորագույն գիտնականը, որի գրքերը ինքը և գնորդները վերցնում են մեծագույն ակնածանքով:

- Ընդունեք իմ խոնարհումը և ներողամիտ եղեք, -ասաց նա: -Ես երջանիկ եմ, որ տեսնում եմ Ձեզ: